

ԿԱՐԵՆ ՄԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ «Տնտեսագիտություն և կառավարում» ամբիոնի վարիչ,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

**ՊԵՏԱԿԱՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ
ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Չնայած այն հանգամանքին, որ տարբեր ժամանակաշրջաններում առաջացող տնտեսական ճգնաժամերն ընթանում են որոշակի առանձնահատկություններով, այնուամենայնիվ հնարավոր է մշակել պետական հակաճգնաժամային կարգավորման ոլորտում հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության համընդհանուր գործիքների ընտրության չափորոշիչների համախումբ, որը կարող է կիրառելի լինել ճգնաժամերի հաղթահարմանն ուղղված պետական հակաճգնաժամային քաղաքականության մշակման ժամանակ:

***Բանալի բառեր՝** պետական հակաճգնաժամային քաղաքականություն, տնտեսական ճգնաժամ, ֆինանսական օժանդակություն, կայուն տնտեսական աճ*

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի պայմաններում կախված դրա առանձնահատկություններից և ազդեցությունների խորությունից, ինչպես նաև դրա տարածման սահմաններից՝ առանձին երկրներում պետական հակաճգնաժամային քաղաքականությունն ընթանում է որոշակի առանձնահատկություններով՝ կախված դրա տարբեր ձևերի, մեթոդների և գործիքակազմի կիրառման հետ: Սակայն, միաժամանակ հարկ է նշել, որ չնայած նշված առանձնահատկություններին՝ հնարավոր է մշակել պետական հակաճգնաժամային կարգավորման ոլորտում հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության համընդհանուր գործիքների ընտրության չափորոշիչների համախումբ, որը կարող է կիրառելի լինել ցանկացած երկրում պետական հակաճգնաժամային քաղաքականության իրականացման դեպքում: Դրանք հետևյալն են.

- տնտեսության իրական հատվածի աջակցությանն ուղղվածությունը,
- համախառն պահանջարկի խթանումը,
- ճգնաժամից տուժած ընկերություններին ֆինանսական օժանդակությունը,
- ներքին շուկայի և ազգային արտադրողների պաշտպանությունը,
- սոցիալական ուղղվածությունը,
- գիտատեխնիկական ու մարդկային ներուժի զարգացմանն ուղղվածությունը,
- ֆինանսական շուկայի և ֆինանսական կառույցների կայունության ապահովումը,

- վարկային ռեսուրսների մատչելիության ապահովումը,
- պետական երաշխիքների համակարգի ընդլայնումը,
- պետական ռեսուրսների արդյունավետ բաշխումը և վերաբաշխումը:

Ինչ վերաբերվում է պետական հակաճգնաժամային քաղաքականության սկզբունքներին, ապա դրանք կարող են լինել հետևյալները.

- թիրախավորվածությունը,
- գիտականորեն հիմնավորվածությունը,
- օրենսդրական համապատասխան դաշտի առկայությունը,
- հակաճգնաժամային միջոցառումների տեղեկատվական ապահովվածությունը,

• թափանցիկությունը,

- թափանցիկությունը և հրապարակայնությունը,

- ֆինանսական ապահովվածությունը,

• միջոցառումների մշտադիտարկումը և պարբերաբար վերանայումը՝ կախված ձևավորված տնտեսական իրավիճակից:

Հակաճգնաժամային միջոցառումների արտերկրյա փորձի և տնտեսական ճգնաժամների պատճառների ու ազդեցությունների վերլուծության, ինչպես նաև վերը նշված չափորոշիչների հիման վրա կարող ենք համալիր կերպով ներկայացնել այն հիմնական ուղղությունները և միջոցառումների համալիրը, որոնց արդյունավետ իրականացման արդյունքում պետությունը կարող է բավականին արագ ու տնտեսական խորը անկումներից հնարավորինս խուսափելով հաղթահարել տնտեսական ճգնաժամների հետևանքները և երկարաժամկետ հատվածում տնտեսական աճի համար բարենպաստ պայմաններ ստեղծել: Այդ ուղղությունները հետևյալն են.

1. Տնտեսության իրական հատվածում գործող ընկերությունների ֆինանսական օժանդակություն, այդ թվում՝

- վարկավորման ընդլայնման աջակցություն,
- ընկերությունների կապիտալիզացիայի աճ,
- պետական երաշխիքների համակարգի ընդլայնում,
- կազմակերպությունների ուղղակի բյուջետային ֆինանսավորում¹:

Նշենք, որ ՀՀ-ում տվյալ ուղղությանը բավական լուրջ ուշադրություն է հատկացվել՝ կառավարության հակաճգնաժամային ծրագրի իրականացման ընթացքում: Ինչպես արդեն վերևում նշվեց, հակաճգնաժամային միջոցառումների ամենաձավալուն ուղղությունը հանդիսացել է ՓՄՁ-երի ֆինանսական աջակցությունը: Այս ոլորտում հիմնական թերություններն են հանդիսացել ՓՄՁ-երի ընտրության ոչ թափանցիկությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ կազմակերպությունների կողմից որպես ֆինանսական աջակցություն ստացված միջոցների մեծ մասը չի ներդրվել տնտեսության իրական հատվածում, այլ ուղղվել են ժամկետանց վարկային պարտավորությունների մարմանը:

¹ Մարգարյան Կ.Ս. Պետական հակաճգնաժամային քաղաքականության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները- ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան 2016, 371-374 էջեր

2. Գործարար միջավայրի վրա հարկային բեռի կրճատում, այդ թվում՝

- կորպորատիվ և անուղղակի հարկերի դրույքաչափերի կրճատում և առանձին հարկերի վերացում,

- հարկերի տարբերակված դրույքաչափերի կիրառում,

- մաքսավճարների կրճատում և առանձին մաքսավճարների վերացում,

- հարկային վարչարարության պարզեցում և թափանցիկության բարձրացում,

- մրցակցային միջավայրի բարելավում:

3. Համախառն պահանջարկի խթանում, այդ թվում՝

- անուղղակի հարկերի կրճատում և դրանց տարբերակված դրույքաչափերի կիրառում,

- ֆիզիկական անձանցից գանձվող հարկերի դրույքաչափերի կրճատում,

- պետական պատվերների ընդլայնում,

- ազգաբնակչության ներքին սպառման խթանում:

4. Սոցիալական լարվածության թուլացում, այդ թվում՝

- սոցիալական ծրագրերի ֆինանսավորման չափերի պահպանում և ընդլայնում,

- գործազրկության նպաստի ավելացում,

- զբաղվածության նպատակային ծրագրերի իրականացում,

- աշխատողների մասնագիտական վերապատրաստման կազմակերպում:

5. Գիտության և նորարարությունների ֆինանսավորում, այդ թվում՝

- էներգախնայող և ռեսուրսախնայող տեխնոլոգիաների զարգացում,

- մաքուր տեխնոլոգիաների զարգացում,

- նորարարությունների խթանում:

Վերը նշված ուղղություններն առնչվում են ինչպես հարկաբյուջետային, այնպես էլ դրամավարկային քաղաքականության ոլորտներին: Նախ անդրադառնանք հարկաբյուջետային քաղաքականությանը: Հարկ է նշել, որ վերջին համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում աշխարհի բազմաթիվ երկրներ նվազեցրեցին տնտեսվարողների հարկային բեռը՝ ընդհուպ մինչև առանձին հարկատեսակների վերացում: Ինչ վերաբերվում է Հայաստանին, ապա հարկային բեռի որևէ կրճատում մեր հանրապետությունում փաստացի տեղի չունեցավ: Ներկայումս, տնտեսության ակտիվացման, ազգանակչության վճարունակ պահանջարկի ընդլայնման, համախառն սպառման և տնտեսության մեջ ներդրումների խթանման համար խիստ անհրաժեշտություն կա հարկային բարեփոխումների ճանապարհով նվազեցնել հարկային բեռը՝ դրան զուգահեռ ընդլայնելով հարկման բազան, ինչը թույլ կտա Հայաստանի տնտեսական համակարգն ավելի արդյունավետ դարձնել: Վերոգրյալը հաշվի առնելով փորձենք ներկայացնել հարկային քաղաքականության ոլորտի հետ կապված բարեփոխումների ուղղությունները՝ տնտեսության հակաճգնաժամային կարգավորման համատեքստում:

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը, բնութագրվում է անուղղակի հարկերի բարձր տեսակարար կշռով, իսկ իրականացվող հար-

կային քաղաքականությունը հիմնականում կրում է ֆիսկալ բնույթ: Անշուշտ, ԱԱՀ-ն հանդիսանում է պետական բյուջեի եկամտային մասին ձևավորման հիմնական աղբյուրը, սակայն, միաժամանակ, պետք է նշել, որ բացի զուտ ֆիսկալային գործառնությունից նշված հարկատեսակն ունի նաև այլ՝ կարգավորիչ գործառնություն, որը լայնորեն կիրառվում է աշխարհի բազմաթիվ երկրներում: ԱԱՀ-ն հանդիսանալով անուղղակի հարկ և ներառվելով ապրանքի գնագոյացման մեջ հանդիսանում է վերջինիս շուկայական առաջարկի ու պահանջարկի ձևավորման կարևոր գործոն և անմիջականորեն ազդում է արտադրության ու իրացման ծավալների վրա, և հետևաբար նաև երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա: Ներկայումս, ԱԱՀ-ին առնչվող կարևորագույն բարեփոխումներից մեկը կարող է համարվել վերջինիս դրույքի նվազեցումը, ինչը կարող է էականորեն նպաստել արտադրության ծավալների ընդլայնմանը և ապրանքների ընդհանուր գների նվազեցմանը, ինչը հատկապես կարևորվում է տնտեսական ակտիվությունը խթանման նպատակով: Հակաճգնաժամային հարկային միջոցառումների շարքում նպատակահարմար կլինի նաև կենսական նշանակության ապրանքների և ծառայությունների համար կիրառել ԱԱՀ-ի նվազեցված դրույք (ինչպես արվում աշխարհի բազմաթիվ երկրներում): Մասնավորապես, նվազեցված դրույքը կարող է կիրառվել առաջին անհրաժեշտության մթերային, դեղագործական ապրանքների, ջրամատակարարման, էներգամատակարարման, ուղևորատար տրանսպորտային ծառայության և նման այլ սոցիալական կարևոր նշանակության ապրանքների և ծառայությունների նկատմամբ: Նշենք նաև, որ արտերկրում ԱԱՀ-ի նվազեցված դրույքը լայնորեն կիրառվել է, մասնավորապես ԵՄ անդամ- երկրներում՝ այն սահմանելով 5-9%-ից մինչև 0%-ի միջակայքում¹: Կարծում ենք, որ ԱԱՀ-ի դրույքաչափի նվազեցումը կնպաստի մեր հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակի էական բարելավմանը և վճարունակ պահանջարկի ընդլայնմանը: Հարկադրույքի իջեցման հետևանքով բյուջետային մուտքերի նվազեցումը հնարավոր կլինի փոխհատուցել շնորհիվ այլ հարկային մուտքերի ավելացման, ինչպես նաև անարդյունավետ բյուջետային ծախսերի կրճատման: Մասնավորապես, գների իջեցման շնորհիվ աճող պահանջարկը կարող է ավելացնել նաև արտադրության ծավալները, ինչը կարող է հանգեցնել արտադրողների ֆինանսական վիճակի բարելավման, շահույթի աճի և հետևաբար այդ մասով հարկային եկամուտների ավելացման:

Անդրադառնալով շահութահարկին, հարկ է նշել, որ այս հարկատեսակի հետ կապված՝ որպես հակաճգնաժամային միջոցառումներ կարող են հանդես գալ տարաբնույթ արտոնությունների կիրառումը հատկապես ներդրումների խթանման, գիտահետազոտական աշխատանքների, նորարարությունների ֆինանսավորման, փոքր ձեռնարկությունների աջակցության նպատակով: Այդ արտոնությունները կարող են հանդես գալ հարկման ենթակա շահույթի

¹ VAT Rates Applied in the Member States of the European Union. Situation at 1 January, 2017, Brussels – Belgium

կրճատման, հարկադրույքի նվազեցման, հարկերի վճարման հետաձգման կամ նույնիսկ հարկից ազատելու միջոցով: Գործունեության առանձին տեսակների աջակցության և տնտեսության որոշակի ճյուղերի աշխուժացման նպատակով նման քայլերի կիրառումը կարող է իր դրական ազդեցությունն ունենալ ճգնաժամի արագ հաղթահարման համար:

Շահութահարկի գծով հակաճգնաժամային բարեփոխումներից կարելի առանձնացնել արագացված ամորտիզացիայի կիրառումը, որի շնորհիվ հարկման ենթակա եկամուտներից նվազեցվող ամորտիզացիոն մասհանումների հաշվարկային մեծությունը գերազանցում է տնտեսապես հիմնավորված ամորտիզացիայի մեծությանը: Դրա շնորհիվ շահույթի որոշակի մասն ազատվում է հարկումից՝ ամորտիզացվող գումարը եկամտից նվազեցվող ծախսերին վերագրելու միջոցով: Նշված միջոցառման կիրառման արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ կլինի համապատասխան փոփոխություններ կատարել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում՝ վերանայելով ներկայիս գործող ամորտիզացիոն նվազագույն ժամկետները¹: Բացի այդ, նպատակահարմար կլինի պաշտոնապես հաստատել այն հիմնական միջոցների ցանկը, որոնց գծով ամորտիզացիոն մասհանումները կթույլատրվի իրականացնել արագացված տարբերակով:

Շահութահարկի գծով արդյունավետ հարկային արտոնությունների կարևոր ուղղություններից է հարկվող եկամտի նվազեցումն այն մասով, որն ուղղվելու է ներդրումների ֆինանսավորմանը: Իրականացված ներդրումների մեծությունից կախված՝ կարող են սահմանվել առանձին դրույքաչափեր, քանի որ հատկապես ճգնաժամի պայմաններում արդարացված չի կարող լինել այն փաստը, որ կապիտալ ներդրումներ իրականացնող և չիրականացնող կազմակերպությունները հարկման տեսանկյունից նույն պայմաններում են գտնվում:

Շահութահարկի մասով բարեփոխումների շրջանակում կարծում ենք նպատակահարմար կլինի վերանայել նաև շահույթից նվազեցվող ծախսերի առավելագույն նորմաները: Կազմակերպությունները պետք է հնարավորություն ունենան համախառն շահույթից նվազեցնել փաստաթղթերով հիմնավորվող բոլոր ծախսերը, ինչը կնպաստի վերարտադրության գործընթացի նորմալ կազմակերպմանը:

Անդրադառնալով ֆիզիկական անձանցից գանձվող հարկերին, պետք է փաստել, որ ներկայումս «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգը հիմնականում հիմնված է աշխատավարձի հարկման վրա²: Սակայն, իրականում առկա են նաև ֆիզիկական անձանց եկամտի այլ աղբյուրներ, որոնք ընդհանրապես չեն ներառված հարկման բազայի մեջ կամ նվազեցվում են հարկվող եկամտից (օրինակ՝ ժառանգությունն ու նվիրատվությունը, ֆինանսական ոլորտի գործառնություններից ձևավորվող եկամուտը, օֆշորային գոտիներում գրանց-

¹ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք//www.arlis.am

² «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք//www.arlis.am

ված կազմակերպություններից ստացվող եկամուտները, արտասահմանից ստացվող տրանսֆերտային վճարները և այլն): Հաշվի առնելով երկրի սոցիալ-տնտեսական վիճակը, հարկային համակարգի առանձնահատկությունները և առկա ճգնաժամային երևույթները՝ ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգի բարեփոխումները պետք է ուղղված լինեն՝

- ֆիզիկական անձանց եկամուտների բոլոր աղբյուրների հարկման միջոցով բյուջեի եկամուտների ավելացմանը և հարկման պրոգրեսիվության բարձրացմանը,

- ֆիզիկական անձանց եկամուտների ու ծախսերի նկատմամբ արդյունավետ վերահսկողության սահմանմանը,

- հարկման գործընթացում արդարության սկզբունքի ապահովմանը,

- ազգաբնակչության եկամուտների տարբերակվածության կրճատմանը և այլն:

Նշված նպատակների իրագործման համար անհրաժեշտ կլինի մշակել և ներդնել փոխկապակցված հարկերի համակարգ, որը կընդգրկի ֆիզիկական անձանց բոլոր եկամուտները և գույքը, ինչպես նաև հիմնված կլինի ֆիզիկական անձանց իրականացրած ծախսերի միջոցով եկամուտների իրական չափի բացահայտման վրա: Համակարգը կարող է առավել արդյունավետ գործել համընդհանուր պրոգրեսիվ հարկի սահմանման դեպքում՝ դրա հիմքում դնելով հարկման ֆիսկալ և սոցիալական արդյունավետությունը: Այս դեպքում կարծում ենք նպատակահարմար կլինի սահմանել հարկման դրույքը ելնելով ոչ թե անվանական, այլ իրական եկամտի մեծությունից (հաշվի առնելով եկամուտների գնողունակությունը), եկամտահարկի հաշվարկման մեխանիզմում ներառելով գնաճի մակարդակը՝ հաշվի առնող գործակից: Վերոգրյալի կենսագործման համար անհրաժեշտ կլինի նաև կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ, ինչպես նաև ապահովել համակարգի գործունեության նկատմամբ արդյունավետ պետական հսկողության սահմանում: Անդրադառնալով դրամավարկային քաղաքականությանը, պետք է նշել, որ համեմատած ֆիսկալ քաղաքականության հետ, այն ավելի ճկուն և արդյունավետ է, պայմանավորված այն հանգամանքով, որ այս ոլորտում քաղաքական ազդեցություններն ավելի քիչ են, իսկ որոշումներն ընդունվում են ավելի արագ և օպերատիվ կերպով: Վերջինիս բացասական կողմերից կարելի է նշել այն, որ դրամավարկային քաղաքականության միջոցով առևտրային բանկերի կողմից վարկերի տրամադրման ծավալների և ըստ այդմ, տնտեսության մեջ փողի առաջարկի վրա ազդեցություն գործելու համար որոշակի ժամանակ է պահանջվում:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության հիմնական նպատակը տնտեսության մեջ գների կայունության ապահովումն է¹: Թերևս մեկուսացված փակ տնտեսության պայմաններում հնարավոր է, որ գնաճի թիրախավորումը արդյունավետ կերպով նպաստի տնտեսության աճին, սակայն, համաշխարհային տնտեսության

¹ «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք/www.arlis.am

զարգացման ներկայիս պայմաններում, երբ ժամանակակից երկրների տնտեսությունները գործում են միջազգային ինտեգրման և տնտեսական գործընթացների ընդլայնողականացման պայմաններում, որպես ՀՀ ԿԲ գերակա նպատակ գնաճի զսպման սահմանումը այդքան էլ նպատակահարմար չէ: Ասվածն հիմնավորելու համար կարող ենք նշել, որ Հայաստանն ունի բաց տնտեսություն և հանդիսանում է հիմնականում ապրանքներ ներկրող երկիր, ուստի՝ շատ ապրանքատեսակների գնաճն այստեղ կրում է «ներմուծվող» բնույթ՝ կապված արտասահմանյան շուկաներում այդ ապրանքատեսակների գների բարձրացման հետ: Բնականաբար, նման գնաճի զսպումը Կենտրոնական բանկի դրամավարկային գործիքակազմի միջոցով իրատեսական չի կարող համարվել: Պետությունը, պարզապես, կարող է դրա ազդեցությունները մեղմել՝ խթանող ֆիսկալ քաղաքականության միջոցով, որը ենթադրում է ծախսերի ավելացում՝ եկամուտների ինդեքսավորման, դոտացիաների տրամադրման և պետական աջակցության այլ ծրագրերի իրականացման միջոցով: Վերը նշված խնդիրը կարող է արդյունավետ կերպով կարգավորվել միայն միջազգային տնտեսական սերտ համագործակցության շրջանակներում՝ միջազգային տնտեսական կառույցների և երկրների կառավարությունների փոխհամաձայնեցված ծրագրերի շնորհիվ:

Միաժամանակ, պետք է նշել, որ փողի արժեզրկումը կամ գնաճը ազգային տնտեսության վրա միայն բացասական ազդեցություններ չէ որ ունեն: Տնտեսական ժամանակակից բազմաթիվ հետազոտություններ վկայում են, որ գնաճի ցածր տեմպերը կարող են բացասական ազդեցություն ունենալ տնտեսության վրա, առավել ևս տնտեսական անկումից դեպի տնտեսական վերելքի փուլ անցման ժամանակ:

Հաշվի առնելով վերոգրյալը, կարծում ենք, որ ժամանակակից տնտեսական զարգացումների պարագայում, անհրաժեշտ է վերանայել Կենտրոնական բանկի հիմնական խնդիրները և առաջնությունը տալ ոչ թե գների կայունությանը, այլ կայուն տնտեսական աճի ապահովմանը և տնտեսության իրական հատվածում ներդրումների խթանմանը: Մեծապես կարևորվում է նաև, որ այդ նպատակով վերանայվեն ԿԲ կողմից կիրառվող դրամավարկային քաղաքականության ուղղությունները, գործիքները և մեթոդները, առանձնացվեն ազդեցության կոնկրետ ոլորտներ, սահմանվեն դրանց համար կոնկրետ նպատակներ, ինչպես նաև այդ նպատակների իրագործման քանակական և որակական ցուցանիշներ: Համարժեք գործիքակազմի ու համապատասխան ոլորտներում ցուցանիշների վերահսկողության ճկուն մեխանիզմների սահմանման միջոցով հնարավոր կլինի ապահովել շուկայում ընթացող բոլոր գործընթացների կայունությունը և փոխադարձ հավասարակշռվածությունը:

Դրամավարկային քաղաքականության ևս մեկ հիմնախնդիր էլ կայանում է նրանում, որ առևտրային բանկերը տնտեսական աճի փուլում մեծացնում են փողի առաջարկը, բերելով դրամի զգալի չափերով արժեզրկման, և ընդհակառակը, տնտեսական անկման փուլում, երբ տնտեսությունը փողի մեծ պահանջարկ ունի, վերջիններս նվազեցնում և նույնիսկ դադարեցնում են վարկերի տրամադրումը, դրանով էլ ավելի խորացնելով տնտեսական անկումը:

Նշված հիմնախնդիրը, կարծում ենք, կարող է լուծվել Կենտրոնական բանկի կողմից առևտրային բանկերի վարկային քաղաքականության նպատակային ուղղորդման միջոցով:

Ներկայումս, խիստ կարևորվում է նաև բանկային տոկոսադրույքների տարբերակումն՝ ըստ տնտեսական ոլորտների: Ամենակարևոր քայլերից մեկը, կարծում ենք, տնտեսության իրական հատվածում ներդրումների խթանումն է, ինչին կարելի է հասնել մատչելի տոկոսադրույքով վարկային ռեսուրսեր ապահովելով այդ ոլորտին: Կենտրոնական բանկը նշված խնդիրը կարող է լուծել երկու եղանակով: Առաջին դեպքում, նա կարող է հանդես գալ առևտրային բանկերին տնտեսության իրական հատվածի ֆինանսավորմանն ուղղված սուբսիդավորված նպատակային վարկերի տրամադրմամբ, երկրորդ դեպքում՝ Կենտրոնական բանկը այդ վարկերի տրամադրումը կարող է կազմակերպել անձամբ՝ մրցութային կարգով ընտրելով տնտեսության առաջնահերթ ոլորտներին վերաբերվող լավագույն բիզնես-առաջարկները և կառավարության տրամադրած երաշխիքների հիման վրա վարկավորելով դրանք: Վերոհիշյալ միջոցառումների իրականացումը մեր հանրապետությունում մեծապես կնպաստի տնտեսության աշխուժացմանը, ներդրումների խթանմանը և լուրջ նախադրյալներ կստեղծի երկարատև կայուն տնտեսական աճի համար:

Ճգնաժամերի բացասական ազդեցությունները մեղմելու և տնտեսական ցուցանիշներում դրական շարժընթաց ապահովելու համար՝ հակաճգնաժամային ծրագրերն իրենց մեջ պետք է ներառեն ինչպես երկարաժամկետ ռազմավարական, այնպես էլ միջնաժամկետ և կարճաժամկետ մարտավարական նպատակներ: Հակաճգնաժամային միջոցառումներն անհրաժեշտ է ձեռնարկել ինչպես կենտրոնացված՝ կառավարության մակարդակով, այնպես էլ հանրապետության առանձին տարածաշրջաններում՝ մարզերում և համայնքներում, խոշոր ձեռնարկություններում, որոնք բնականաբար պետք է համահունչ լինեն կառավարության կողմից մշակված հակաճգնաժամային միջոցառումների ծրագրի հիմնական նպատակներին և սկզբունքներին:

Անդրադառնալով տնտեսության հակաճգնաժամային քաղաքականության ոլորտում հնարավոր ռիսկերին, ապա դրանցից կարելի է առանձնացնել հետևյալները.

1. Պետության տրամադրության տակ առկա ֆինանսական ռեսուրսների կտրուկ կրճատումը՝ պայմանավորված հարկային մուտքերի կտրուկ նվազմամբ և սոցիալական ոլորտի ու ֆինանսական ծանր կացության մեջ գտնվող ձեռնարկությունների աջակցության ուղղությամբ աճող հատկացումներով:

2. Մելեկտիվ բնույթի հակաճգնաժամային միջոցառումների գերակշռումը՝ առանց այդ միջոցառումների նկատմամբ գործուն վերահսկողական մեխանիզմների սահմանման, ինչը նվազեցնում է վերջիններիս արդյունավետությունը և ծնում կոռուպցիոն երևույթներ: Բացի այդ, նշված միջոցառումների գերակշռումը կարող է զգալի ֆինանսական ռեսուրսներ պահանջել, որոնք այլ հավասար պայմաններում կարող էին ուղղվել երկարաժամկետ տնտեսական աճ ապահովող ռազմավարական ոլորտների զարգացմանը:

3. Պետության ֆինանսական ռեսուրսների սղության պայմաններում՝

զարգացող և արդյունավետ գործող ոլորտների ֆինանսավորման կրճատումը, ինչը կարող է հանգեցնել այդ ոլորտների արդյունավետության նվազման:

4. Անարդյունավետ վարչարարության և իրականացված միջոցառումների մասին ցածր հաշվետվողականության և ոչ թափանցիկության հետ կապված ռիսկերը, որոնք ազդում են հակաճգնաժամային միջոցառումների շահադրողական ներուժի վրա, զրկում իշխանություններին գործարար միջավայրից և հասարակությունից հետադարձ տեղեկատվության ստացման հնարավորությունից, ինչը բնականաբար ազդում է հակաճգնաժամային միջոցառումների արդյունավետության վրա:

Վերոհիշյալ ռիսկերի չեզոքացման համար անհրաժեշտ է կատարելագործել հակաճգնաժամային քաղաքականության շրջանակում իրականացվող միջոցառումների ընտրության և իրականացման մոտեցումները, ներդնել դրանց նկատմամբ վերահսկողական գործուն համակարգ, հստակ պահանջներ սահմանելով ֆինանսական օժանդակություն ստացող ընկերությունների նկատմամբ՝ վերջիններիս հաշվետվողականությունը և գործունեության հրապարակայնությունն ապահովելու համար:

Ակնհայտ է, որ վերոհիշյալ ռիսկերի չեզոքացման և հակաճգնաժամային քաղաքականության արդյունավետության բարձրացման ուղղությամբ կարևոր դերակատարում ունի հակաճգնաժամային միջոցառումների վարչարարության կատարելագործումը: Այդ ուղղությամբ կարծում ենք անհրաժեշտ է՝

- ձևավորել պետություն-գործարար միջավայր-հասարակություն եռակողմ ակտիվ համագործակցություն,

- առավել հիմնավորված, հրապարակային և թափանցիկ դարձնել հակաճգնաժամային միջոցառումների մշակման և իրականացման գործընթացները,

- մշակել հակաճգնաժամային միջոցառումների իրականացման հստակ մեխանիզմներ, այդ թվում՝ ֆինանսական աջակցության տրամադրման մասով: Այս գործընթացը պետք է իրականացվի գործարար միջավայրի և հասարակության ներկայացուցիչների հետ տարվող ակտիվ երկխոսության միջոցով՝ հակաճգնաժամային ծրագրերի, հայեցակարգերի և նորմատիվ փաստաթղթերի քննարկման արդյունքում: Ընդ որում, մեծապես կարևորվում է այդ միջոցառումների և դրանց իրականացման գծով մշակվող ծրագրերի ու նորմատիվային ակտերի վերաբերյալ հրապարակային գնահատականների ստացումը գործարար միջավայրից:

- Սահմանել հակաճգնաժամային միջոցառումների իրականացման հստակ ժամանակացույցեր, միջանկյալ ու վերջնական չափելի ցուցանիշներ, որոնց ապահովումը կարող է վերահսկվել գործարար միջավայրի և հասարակության ներկայացուցիչների կողմից:

Հակաճգնաժամային քաղաքականության արդյունավետության բարձրացման ուղղությամբ ոչ պակաս կարևոր խնդիր է հանդիսանում հակաճգնաժամային միջոցառումների գնահատման համար տեղեկատվական բազայի ընտրությունը: Ինչպես ուսումնասիրությունները վկայում են, այս ոլորտում հիմնականում կիրառելի են պաշտոնապես հրապարակված վիճակագրական

տվյալները, իրավական ակտերը, ՁԼՄ-ներով կառավարության ներկայացուցիչների կողմից կատարված հայտարարությունները, կառավարության նիստերի արձանագրությունները, պետական մարմինների պաշտոնատար անձանց ելույթները, մամլո ասուլիսները, հրապարակային քննարկումները և այլն: Կառավարության հակաճգնաժամային միջոցառումների թափանցիկությունը կարող է ապահովվել մշտական գործող հարթակների միջոցով այդ միջոցառումների իրականացման վերաբերյալ ամբողջական տեղեկատվության տրամադրմամբ: Վերջինս կնպաստի կառավարության գործունեության նկատմամբ ազգաբնակչության և տնտեսվարողների վստահության ամրապնդմանը, ինչն էլ, իր հերթին, դրական սպասումների մթնոլորտ կձևավորի մեր հանրապետության տնտեսության մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք//www.arlis.am
2. «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք//www.arlis.am
3. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք//www.arlis.am
4. **Սարգսյան Կ.Ս.** Պետական հակաճգնաժամային քաղաքականության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները- ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան 2016, 371-374 էջեր
5. VAT Rates Applied in the Member States of the European Union. Situation at 1 January, 2017, Brussels – Belgium

KAREN SARGSYAN

Национальная академия наук РА, Международный научнообразовательный центр,
заведующий кафедрой экономики и менеджмента,
кандидат экономических наук, доцент

ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ И ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ ГОСУДАРСТВЕННОЙ АНТИКРИЗИСНОЙ ПОЛИТИКИ В РА

Несмотря на то, что возникающие в разные периоды экономические кризисы имеют свои особенности, тем не менее можно разработать набор стандартов отбора инструментов фискальной и денежно-кредитной политики в области государственного антикризисного регулирования, которые могут быть использованы при разработке государственной политики по преодолению кризисов.

KAREN SARGSYAN

International Scientific-Educational Center of NAS RA
Chair of “Economics and Management”, Chair Head, Candidate of Economic Sciences,
Associate Professor

WAYS OF IMPROVING AND RAISING THE EFFICIENCY OF STATE ANTI-CRISIS POLICY IN THE RA

Despite the fact that the economic crises that occur in different periods proceed with certain peculiarities it is possible to elaborate a set of standards for the selection of fiscal and monetary policy instruments in the field of state anti-crisis regulation, which can be applied during the development of specific anti-crisis policy for overcoming crises.